2.qxd 25/02/2020 18:56 Page 1

ԻՆՉՊԻՍԻ ՍԵՐՄ ՑԱՆԵՍ, ԱՅՆ ԷԼ ԿՍՏԱՆԱՍ

1+1

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԵՐԹ 27 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թ. թիվ 2 (12)

ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ Է ԱԼՊԻՆԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Մեր զրուցակիցներն են գնդապետներ Արայիկ Մուրադյանը և Սամվել Խաչատրյանը:

Հարց-Պարո՜ն գնդապետ, Ձեր կարծիքով պարտադիր է մեր դպրոցներում ալպինիստական խմբակների առկայությունը:

Պատասխան- Յուրաքանչյուր հարց ունի իր երկկողմ պատկերացումը և բացատրությունը: Խաղաղ պայմաններում, հատկապես դպրոցական շրջանում, հնարավոր է կողմնորոշվել մասնագիտության հարցում, կազմակերպել նախասիրական խմբակներ՝ զարգացնելով սերունդների ֆիզիկական և մտավոր ունակությունները, իսկ պատերազմական իրավիճակում պետք է այդ ունակությունները ներդրվեն մեր հայրենիքի պաշտպանության գործում:

Մենք՝ մարդ էակներս, մեծ նշանակություն ենք տալիս մեր ապահովությանը, անվտանգությանը, ֆիզիոլոգիական և սոցիալական կարիքների բավարարմանը: Որպեսզի պահպանենք մեր տարածքները, մենք պետք է ճանաչենք դրանք: Ստացվում է, որ եթե մենք ուզում ենք սիրել մեր հայրենիքը, պետք է ճանաչենք այն: Հիմա կփորձեմ բացատրել, թե ինչ է նշանակում ճանաչել այն, ինչը ուզում ես սիրել և կյանքի գնով պաշտպանել: Մեր ենթագիտակցության մեջ, դեռ փոքր տարիքից գտնվելով մայրերի խնամքի տակ, մեք հիշում ենք այդ ժպիտը, մեծանալով ծանոթանում ենք մեր տունը, փողոցին, գյուղին, քաղաքին, սիրում ենք մեր տունը, փողոցը, գյուղը, քաղաքը:Բայց պետք է հասկանանք, որ այդ ամենը ստեղծել է բնությունը միլիոնավոր տարիներ առաջ, մենք պատկանում ենք բնությանը, այսինքն՝ այնտեղից ենք վերցնում այն էներգիան, որով կարողանում ենք ապրել և աշխատել:

Որպեսզի ճանաչես քո շրջապատի բնությունը, պետք է անմիջականորեն առնչվես բնության հետ. Ցանես, քաղես, շրջապատը դիտես, հաղթահարես բարձունքներ, ուզենաս դառնալ արծիվ, մտովի թռչես, դիմավորես արևածագը, գիշերը հիանաս աստղերով:

Հավատա՜ցեք ինձ, այդպիսի մարդը կյանքը կտա, որպեսզի պաշտպանի իր նախնիների գերեզմանը, իր տունը, իր գյուղը, իր քաղաքը, իր լեռներն ու ձորերը:

Հ.-Պարո՜ն գնդապետ, ի՞նչ կասեք քարտեզագիտության վերաբերյալ:

Պ.-Գոյություն ունի տեղեկագրության դասագիրք և քարտեզագրություն: Ցանկացած մարտական գործողություն իրականացնելիս քարտեզով ուսումնասիրում ենք տեղանքը, փորձում ենք պարզել՝ այն հարթ է, բլրոտ է, թե լեռնային, և այս բոլորը պետք է հաշվի առնենք: Լեռնային պայմաններում հատուկ պատրաստված ստորաբաժանումներ պետք է լինեն, որովհետև հարթ և բլրոտ տարածքներում բարդությունները այնքան շատ չեն, և մարդը կարողանում է իրեն դրսևորել, իսկ լեռնային պայմաններում կտրուկ վերելքների և վայրեջքների ժամանակ ավելի շատ ֆիզիկական, շնչառական խնդիրներ են լինում, որից կարող են գիտակցությունը կորցնել? առաջանում է թթվածնաքաղց: ,,Կոմանդոս,, մարզական ակումբը /6-12 տարեկան/ երեխաների հետ հաճախակի է կազմակերպում լեռնագնացության դասընթացներ բնության գրկում: Պետք է լավ տիրապետել լեռնագնացության կանոններին, դրա համար անհրաժեշտ են ուժեղ ֆիզիկական պատրաստականություն և հմուտ մտավոր կարողություն, որպեսզի կարողանան պաշտպանել երկիրը: Քանի որ մենք ապրում ենք լեռնային պայմաններում, պետք է լավ տիրապետենք ալպինիզմին: Կոմանդոսը միշտ ասում է, որ բանակը ընդհանուր զորատեսակային մարտ դժվար է վարում, եթե տեղանքը լեռնային է, ապա տանկային փոքր ստորաբաժանումներով կարելի է վարել կեղծ հարձակումներ: Լեռնային պայմանները կարող են լինել և՜ արդյունավետ, և՜ խոչընդոտող: Եթե մենք վերևում ենք, ապա լեռնային պայմանները օգնում են մեզ, իսկ եթե ներքևում՝ խոչընդոտում են: Տեղանքի տարատեսակ լինելը բերում է բարդություններ, ուստի պարտադիր է ալպինիզմի ուսուցումը դպրոցներում: Ալպինիզմը հնարավորություն է տալիս զարգացնել երկրաբանական գիտելիքները, ֆիզիկական ունակությունները, կարդալ քարտեզները, տարբեր մեթոդներով կողմնորոշվել անծանոթ տարածքներում: Ալպինիզմը սովորեցնում է գործել խմբային մթնոլորտում, սովորել ձեռք մեկնել ընկերոջը, երբ նա վտանգի մեջ է:

Մեր նպատակն է, որ երեխաները ճանաչեն և իմանան, իրենց թույլ ու ուժեղ կողմերը: Մենք պատրաստ ենք աջակցել դպրոցներին՝ դաստիարակելու բանիմաց և հայրենասեր երիտասարդներ: Ձեր հարցերով կարող եք դիմել մեզ՝ «1+1» դպրոցական թերթի խմբագրություն:

Շնորհակալություն գնդապետներ Արայիկ Մուրադյանին և Սամվել Խաչատրյանին՝ հետաքրքիր զրույցի համար, հուսով ենք, որ այն կլինի շարունակական:

Հաջորդ համարում կսովորեցնենք, թե ինչպես են օգտվում կողմնացույցից:

2.qxd 25/02/2020 18:56 Page 2

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, ԾՆՈՂՆԵՐ, ԵՐԵԽԱՆԵՐ

Մենք հանդիպեցինք Երևանի Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական դպրոցի տնօրեն Հայկազ Նավասարդյանի հետ, ծանոթացանք ծրագրերին, խոսեցինք կազմակերպչական հարցերի մասին:

Հարց - Ինչպե՞ս բարձրացնել ուսուցչի հեղինակությունը:

Պատասխան- Կարծում եմ այս հարցը չպետք է ուղղված լիներ ինձ, պետական մարմինները պետք է մտածեն այդ հարցի շուրջ: Ես շատ անգամներ եմ բարձրացրել այդ հարցը: Պետք է ընդունել, որ, ցավոք, այժմ շատերը չեն ցանկանում դառնալ ուսուցիչ, այն ունի տարբեր պատճառներ, թերևս առաջինը ֆինանսական խնդիրն է, երբ ուսուցչի աշխատավարձը չի բավականացնում բարեկեցիկ կյանքի ապահովմանը: Բացի այդ, գրավիչ այլ աշխատանքներն ավելի շատ են, և երիտասարդները հիմնականում ձգտում են դեպի ՏՏ ոլորտ: Այդ պատճառով բարձր կրթական մակարդակ ունեցողները դպրոցներ չեն վերադառնում, այսինքն՝ դպրոց են վերադառնում միայն միջին կրթական աստիճան ունեցողները, և դպրոցը մնում է միջին մակարդակի վրա:

Հ.- Ինչո՞վ է տարբերվում ֆիզմաթ թեքումով դպրոցն այլ դպրոցներից:

Պ.-Ֆիզմաթ դպրոցում հավաքագրվում են դեպի ֆիզիկա, մաթեմատիկա, ինֆորմատիկա առարկաները ձգտում ունեցողները, այդ պատճառով էլ կրթության ձևը տարբեր է, և հատկապես վերոնշյալ առարկաների դասավանդման դեպքում չենք բավարարվում դասագրքերով և դուրս ենք գալիս դրանց սահմաններից: Ֆիզմաթ դպրոցի հեղինակության շնորհիվ շատ հաճելի է այստեղ աշխատելը: Կան նաև խմբակներ, որոնք բարձրակարգ մասնագետներին թույլ են տալիս զարգանալ և ունենալ հավելյալ ֆինանսական ապահովություն: Լավագույն ուսուցիչները մարզերում աշխատանք են տանում մեր դպրոց ընդունվող երեխաների հետ:

Հ.-Որակյալ կրթությունը արդյո՞ք կախված է ուսուցչի վերապատրաստումից:

Պ.-Դպրոցներում ուսուցչի սխալ վերապատրաստման պատճառով դասավանդման մեթոդը մնում է միօրինակ և հաճախ ոչ շահավետ երեխաների կրթության համար: Ուսուցչին որակավորում տվող ֆակուլտետները պետք է ներառեն հանրակրթությանը վերաբերող գիտելիքներ և ոչ թե միայն բարձրագույն հատվածը, քանի որ որքան էլ ապագա ուսուցիչներին սովորեցնեն հնարավորինս շատ, մեկ է, սովորելու էլի բան կլինի, սակայն դպրոցում աշխատելու համար կարևոր է հանրակրթությունը: Մանկավարժություն սովորողները նախքան աշխատելը պետք է ուղղակի հաճախեն դպրոց, դառնան ուսուցչի օգնական, պրակտիկ սովորեն և կողմնորոշվեն՝ արդյոք այդ գործը իրենց համապատասխան է, թե՝ ոչ:

Հ?- Ծնողը կարո՞ղ է խթան հանդիսանալ որակյալ ուսուցման համար:

Պ-Իհա՜րկե, կարող է, եթե անհարկի չխառնվի ուսուցչին վերաբերող աշխատանքներին: Երբ ծնողները ձգտում են լրացուցիչ պարապմունքների՝ կտրելով երեխային դպրոցից, դրանով իսկ բացասականորեն ազդում են ուսուցչի հեղինակության վրա, նաև՝ գերադասելով գնահատականը գիտելիքից: Ծնողները և ուսուցիչները հայտնվում են հակադիր կողմերում՝ փոխանակ մեկ միասնություն կազմելուն: Հեռախոսների հետ կապված՝ ցանկանում ենք հասնել նրան, որ աշակերտը դասի ընթացքում իր մոտ միացած հեռախոս չունենա:

Այդ պատճառով ճիշտ ենք համարում հեռախոսների պատշաճ հավաքումը: Հեռախոսի առկայության դեպքում ուսուցիչը ստիպված է լինում աշակերտին դիտողություն անել դասից շեղվելու պատճառով, և առաջանում է ավելորդ լարվածություն աշակերտի և ուսուցչի միջև:

? Շատ բան է կախված դպրոցի տնօրենից, նրա կազմակերպչական ունակություններից: Տնօրենը պետք է ստեղծի թիմ ուսուցիչների հետ, նրանք պետք է ծնողների հետ կարողանան աշխատել արդյունավետ? ծնողը պետք է հասկանա, որ դպրոցական աղջիկը լոկ օրիորդ չէ: Կարծում եմ, որ ուսուցչի անձնական խնդիրների պատճառով չպետք է տուժեն դասերը / դա կլինի ծնունդ, կնունք, թե հարսանիք/ :

Ծնողները չեն հետևում իրենց երեխաների հագուկապին: Իհա՜րկե, պետք չէ աշակերտներին պարտադրել միասնական համազգեստ? սակայն այն ապահովելը անհամեմատ և՜ լավ է, և՜ շահավետ, նույնիսկ՝ ֆինանսական առումով, և դա նպաստում է խտրականության հնարավորինս նվազեցմանը:

Հ?- Արդյո՞ք պետք է մանկավարժը օժտված լինի հոգեբանական հատկանիշներով:

Պ-Իհա՜րկե, պետք է: Շատ քչերն են դառնում մանկավարժ: Մանկավարժ լինելը մարդուն բնածին է տրվում: Իհարկե, բուհում ապագա ուսուցիչներն անցնում են ,Հոգեբանություն ե առարկան, բայց ցանկացած ուսուցիչ ինչ?որ չափով պետք է լինի հոգեբան, քանի որ աշակերտին հարկավոր է յուրահատուկ մոտեցում, և, ըստ այդմ, աշակերտը ուսուցչի կերպարի մեջ չպետք է տեսնի հրեշի, այլ՝ մեծ ընկերոջ և բարեկամի: Այսինքն՝ մանկավարժ և հոգեբան եզրույթները մեկ ընդհանուր հասկացություն են:

Հ?- Ձեր դպրոցում ի՞նչ տարբերություն եք տեսնում քաղաքի և գյուղի երեխաների միջև:

Պ.-Ֆիզմաթում վաղուց վերացել է քաղաք?-գյուղ տարբերությունը, սակայն օտար լեզուների հետ կապված հաճախ լինում են խնդիրներ. շրջաններից եկածները հաճախ այդ հարցում հետադիմում են, պատճառը այն է, որ քաղաքում ցածր տարիքից օտար լեզուները լավ են դասավանդվում: Ի ուրախություն մեզ՝ վատ հարաբերություններ չկան: Կարևոր փաստն այն է, որ մարզերից եկած երեխաները ֆիզիկայի և մաթեմատիկայի ուղղությամբ հաճախ ավելի բարձր առաջընթաց են ունենում և մեծ հաջողությունների են հասնում: Շատ կարևոր է նաև ընտանիքների դերը, ովքեր գնահատում են կրթությունը և արժևորում այն:

Մենք շնորհակալություն ենք հայտնում պարոն Նավասարդյանին: Հուսով ենք, որ հաջորդ անգամ հնարավորություն կունենանք խոսելու ծրագրերի և կազմակերպչական այլ հարցերի շուրջ:

Լուսինե Գրիգորյան
Մերի Գրիգորյան
Քրիստինե Սարգսյան

ՈՐԱԿՅԱԼ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Որպեսզի քայլենք աշխարհի հետ համընթաց, պետք է ունենանք որակյալ փոփոխություններ, ինչպես անհատի մոտ, այնպես էլ միջավայրում:

Նոր իրողություններում ապրելու են նոր սերունդներ, իսկ մենք միշտ մեր հույսը կապում ենք նրանց հետ:

Պետության համար առաջընթացը ժողովրդի կյանքի որակի բարելավումն է: Մարդ անհատի համար առաջընթացը իր անձնական հնարավորությունների իրականացումն է, որը ընդունելի է քո երկրում քո ժողովրդի կողմից: Այս ամենը համախմբող ռեսուրսը կրթությունն է: Որակյալ կրթություն ապահովելու առաջին նախապայմանը խելամիտ ղեկավարությունն ունենալն է: Գերմանացի փիլիսոփա Կանտի կարծիքով՝ մարդու կողմից ստեղծված նորարարություններից երկուսն են ամենադժվարը՝ արհեստական կառավարելն ու արհեստական դաստիարակելը:

Այդ կարողությունները պետք է ներդաշնակ լինեն դպրոցի աշխատանքում: Դպրոցի կառավարումը տարբերվում է կառավարվող մյուս աշխատանքներից:

Ինչպիսի՞ն է որակյալ ուսուցման համաշխարհային մակարդակը:

Սլովենիա. աշխարհում զբաղեցնում է 13-րդ տեղը: Միջնակարգ կրթությունը բաժանվում է երկու փուլի՝ մինչև 9-րդ դասարանը հիմնական դպրոց և վերջնականը՝-ից մինչև 4 տարի, որի ընթացքում աշակերտը որոշում է սովորել գիմնազիայում, պրոֆտեխուսումնարանում, թե այլուր: Ուսումնական պրոցեսը ներառում է ստեղծագործական միջոցառումներ, արշավներ, այցեր թանգարաններ և թատրոններ, մասնակցություն տարբեր տոնավաճառներին:

Երեխաներին սովորեցնում են մտածել և տալիս են մոտիվացիա առարկաներ սովորելու համար:

Ֆրանսիա. աշխարհում զբաղեցնում է 24-րդ տեղը: Դպրոցում սովորում են 11 տարի: Դպրոցներում գնահատվում են բանավիճային ունակությունները, որտեղ դրսևորվում են փիլիսոփայական, տրամաբանական, քննադատական մոտեցումներ:

Ֆինլանդիա. աշխարհում զբաղեցնում է լավագույն տեղը? Ֆինն երեխաները համարվում են աշխարհում ամենաշատ գիրք կարդացողները: Ֆինլանդիայում չկա լավ կամ վատ դպրոց, բոլոր դպրոցները կահավորված են հավասարաչափ և ստանում են հավասար ֆինանսավորում: Չկան երկրորդական առարկաներ: Բոլոր դպրոցականները համարվում են հատուկ՝ և՜ լավ, և՜ վատ սովորողները: Հաշմանդամություն ունեցող երեխանները սովորում են բոլորի հետ միասին, յուրաքանչյուր երեխա ունի իրեն տրված անհատական հանձնարարությունը: Դասի ժամանակ դպրոցականը կատարում է իր աշխատանքը, որը գնահատվում է անհատապես և չի թույլատրվում համեմատել մյուս աշակերտների աշխատանքների հետ: Ֆիննական դպրոցի կարգախոսն է? ,Երեխաներին պետք է պատրաստել կյանքի, ոչ թե քննության համարե :

Այսօր Հայաստանում կրթական համակարգը չի համապատասխանում վերոնշյալ երկրներում գոյություն ունեցող կրթական ձևերից որևէ մեկին: Ցանկալի է, որ մեր դպրոցերում կրթությունը լինի այնպիսին, որ աշակերտը զերծ մնա լրացուցիչ պարապմունքներից և դպրոցում ստանա բավարար գիտելիք մասնագիտական կողմնորոշման հարցում:

Կրթության որակը բավականին բարդ ու տարողունակ հասկացություն է: Կրթական որակը շատ կարևոր հասկացություն է ոչ միայն միջազգային փաստաթղթերում, այլ նաև հայկական օրենսդրությունում: Պետք է արձանագրել, որ Հայաստանում քանի գնում կրթության որակը բարելավվում է, սակայն ինչպես մյուս ոլորտներում, այնպես էլ այստեղ առկա են թերություններ:

Իմ կարծիքով՝ կրթության որակը բարելավելու հարցում առաջին հերթին պետք է ներգրավենք սովորողներին, քանի որ սովորողները լավագույնս կներկայացնեն կրթական համակարգի բացթողումները: Երկրորդ ամենակարևոր կետերից մեկը Հայաստանում սովորող և ուսուցիչ փոխհարաբերությունների բարելավումը աշակերտը չպետք է իր կարծիքը բարձրաձայն արտահայտելու համար նկատողություն ստանա:

Անհրաժեշտ է կրթական ծրագրերը ավելի մատչելի դարձնել սովորողի համար: Մատչելիությունը մնում է Հայաստանի կրթական համակարգի խնդիրներից մեկը տարաբնույթ պատճառներով, դրանց շարքին են դասվում կրթություն ստանալու հետ կապված խոչընդոտները, քանի որ, գաղտնիք չեմ բացահայտի եթե ասեմ, որ որսկյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ են ֆինանասական միջոցներ: Կրթության որակի բարելավմանը չի նպաստում սոցիալական անհավասարությունը, որովհետև այն սովորողը, որը չունի ֆինանսական ապահովված պայմանները, կարծես իր միջավայրում ճնշված լինի: Եթե մենք կարողանանք տրամաբանական լուծում տալ այս խանգարող հանգամանքներին, կրթական օջախներում կլուծվի սովորողների հավասարության հիմնախնդիրը: Պետք է փորձել յուրաքանչյուր կրթական հաստատություն զինել գերժամանակակից կրթական տեխնոլոգիաներով, որը ուսման որակը կհասցնի բարձր մակարդակի: Պետք չէ նաև աչքաթող անել կրթության որակը մարզերում, քանի որ քիչ մարզեր կան, որտեղ կրթական հաստատություններում դասավանդումը կազմակերպված է որակյալ կերպով:

ՀՀ Գեղարքունիքի մարզի
Լանջաղբյուր գյուղի
Վ. Ադամյանի անվան
միջնակարգ դպրոցի
8-րդ դասարանի աշակերտ
Բազեյան Վոլոդյա

ԾԱՌԱՅՈՒՄ ԵՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Ռազմիկ Պետրոսյան

Արթուր Ավդալյան

«1+1» դպրոցական թերթի խմբագրությունը իր բարեմաղթանքներն է հղում մեր համագյուղացիներ, Հայոց բանակի ժամկետային զինծառայողներ Ռազմիկ Հակոբի Պետրոսյանին, ով օրեր առաջ զորակոչվեց Հայոց բանակ, և Արթուր Ռաֆիկի Ավդալյանին՝ շնորհավորելով նրան ծննդյան օրվա առթիվ: Մաղթում ենք նրանց խաղաղ և բարի ծառայություն:

ՆԱԽԱՆՁ

Երբեմն ծագում է այնպիսի հարց՝ մի՞շտ ենք մենք նախանձում, թե նախանձը ծնվում է և ժամանակի ընթացքում մարում:

Մարդու կյանքում երբեմն լինում է իրավիճակ, երբ վտանգվում է մարդու հանգստությունն ու ապահովությունը. Դա վախն է:

Մենք երբե՛մն ապահովագրված չենք լինում վախից, բայց կա մի կարմիր գիծ, որից հետո վախը սկսում է մեզ անհանգստացնել: Իսկ նախանձը մեզ մոտ հաճախ է հանդիպում: Նախանձը առաջանում է սոցիալական համեմատություններից:

Մենք միշտ մեզ համեմատում ենք ինչ-որ մեկի հետ, հնարավոր է, որ այդ դեպքում մենք նախանձում ենք: Գոյություն ունեն նախանձի մի քանի ձևեր.

1- Սև նախանձ. դա ցանկություն է՝ ոչնչացնել նրան, ում նախանձում ես կամ անել ամեն ինչ, որ նա էլ տառապի այնպես, ինչպես դու: Այդպիսի մարդկանց կարգախոսն է. «Մեզ ոչ մի բան պետք չէ, բայց թող միայն ուրիշները ոչինչ չունենան»:

2-Սպիտակ նախանձ. ում որ նախանձում են, դառնում է օրինակ, որին մարդիկ ուզում են նմանվել:

3-Չար նախանձ. մարդը ուզում է ստանալ այն, ինչի համար ինքը նախանձում է և ուզում է անել ավելին: Այդպիսի նախանձը ի հայտ է գալիս այն դեպքում, երբ մարդը չունի ունակություն հասնելու նրան, ինչին որ նախանձում է:

4- Դեպրեսիոն նախանձ. դա ի հայտ է գալիս հոգեկան ծանր վիճակից /անարդարությունից, զրկվածությունից, դատապարտվածությունից/ զգացմունքից:

5- Անձնական նախանձ. ավելի շատ նախանձում են թաքուն, այն համարվում է ամոթալի: Դա կամ բացառիկ ագրեսիա է մեր նկատմամբ, կամ ցածր ինքնագնահատման դրսևորում:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ նախանձը անբավարարության զգացմունք է ինքդ քո հանդեպ:

Նախանձը շատ ավելի ձևեր ունի, որոնց մենք կանդրադառնանք հետագայում:

Հոգեբան-խորհրդատու՝
Արմինե Հայրապետյան

ՄԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԸ

Մենք ապրում ենք Մերձավոր Արևելքի հյուսիսում՝ Հայկական լեռնաշխարհում: Մեր տարածաշրջանի երկրներն են՝ Վրաստան, Ադրբեջան, Իրան, Օման, Եմեն, Սաուդյան Արաբիա, Միացյալ Արաբական էմիրություններ, Քուվեյթ, Քաթար, Իրաք, Սիրիա, Հորդանան, Լիբանան, Իսրայել, Եգիպտոս, Կիպրոս, Թուրքիա, Բահրեյն, Պաղեստին:

Հայերն աշխարհի հնագույն ժողովուրդներից են, պաշտոնական լեզուն հայերենն է, հիմնականում քրիստոնյաներ են:

Վրացիները խոսում և գրում են վրացերեն, բնակչության մեծամասնությունը դավանում է քրիստոնեությունը, կան նաև իսլամի հետևորդներ:

Ադրբեջանցիները թուրքալեզու ժողովուրդ են:

Վահե Գրիգորյան

Արաբները խոսում են արաբերեն, գործածում են արաբական տառեր: Արաբների թիվը հասնում է մոտ 430-450 միլիոնի, 90 տոկոսը մահմեդականներ են, 10 տակասը՝ քրիստոնյաներ: Հույները խոսում հունարեն, դավանում են քրիստոնեություն: Հրեաները խոսում և գրում են եբրայերեն, դավանում են հուդայականություն: Թուրքերը խոսում են թուրքերեն, դավանում իսլամ:

Մեծ թվով քրդեր են ապրում Թուրքիայում, Սիրիայում, Իրանում և Իրաքում, խոսում են քրդերեն՝ տարբեր բարբառներով, դավանում հիմնականում իսլամ:

Իրանում ապրում են հիմնականում պարսիկներ, խոսում և գրում են պարսկերեն, դավանում իսլամ:

Անի Կարապետյան

Ի՞ՆՉ ԿՈՒԶԵԻ ՓՈԽԵԼ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Յուրաքանչյուր ոք աշխարհն ընկալում է իր ձևով, ես ընկալում եմ իմ ձևով: Եթե հնարավորություն ունենայի շտկել բոլոր այն թերությունները, որոնք ինձ դուր չեն գալիս, ապա առաջին հերթին այնպես կանեի, որ մարդիկ դուրս գան վիրտուալ աշխարհից և ռեալ նայեն կյանքին: Բոլոր երեխաները, ինչպես նաև ես, մեր ազատ ժամանակը վատնում ենք համակարգչային խաղեր խաղալով, մոռանալով ընկերների մասին և այն խաղերի մասին, որոնք խաղում են բակում, և այդպես վնասում ենք ինքներս մեզ: Ճիշտ է, հեռախոսները և համակարգիչները օգնում են մեզ շատ հարցերում, սակայն պետք է իմանալ դրանց ճիշտ օգտագործելու ձևը: Ինչպես նաև կցանկանայի վերացնել շատերի բնավորությանը բնորոշ մի շատ խանգարող գիծ՝ ծուլությունը: Եթե ծուլությունը վերանա, կբարձրանա աշխատունակությունը և կրթության որակը: Կուզեի՝ բոլորը լինեն ավելի խելացի և գիտակցեն իրենց կատարած քայլերի լրջությունը:

Սյուզաննա Ավետիսյան

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ ՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ես միշտ մտորում եմ կրթության դերի ու կարևորության մասին: Իմ ընտանիքի անդամները ինձ միշտ ներշնչել են այն գաղափարը, որ լիարժեք մարդ-քաղաքացի կարող է դաստիարակվել միայն ճշմարիտ ու հաստատուն կրթության ճանապարհով: Եվ այդ մտայնությունը ինձ տարավ մեր պատմության խորքերը՝ դեպի ոսկեդար, երբ ժամանակի մեծագույն մտածողները՝ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը, հասկացան, որ սեփական գիրն ու գրականությունը միայն կարող են դառնալ ազգային հաստատուն կրթության հիմքը:

Դրանից հետո անցել են բազմաթիվ դարեր: Մենք ունենք նույնիսկ մեծ ու հզոր ազգերին պատիվ բերող քնարերգություն, գրականություն, ստեղծել ենք նյութական ու հոգևոր մեծ արժեքներ: Մեր արյունից մի կաթիլ ենք տվել համաշխարհային քաղաքակրթությանը: Աշխարհն այսօր ապրում է քսանմեկերորդ դարը: Այսօրվա սերունդը ժառանգել է իրենց պապերի ստեղծած հոգևոր ու նյութական արժեքները, քաղաքակրթության ողջ գանձարանը:

Բայց եթե որևէ սերունդ կանգ առնի այդ առաջընթացի ճանապարհին, դա կլինի կյանքի ու աշխարհի վերջը. Չէ՞ որ հողագունդն էլ ապրում է շարժման մեջ: Եվ այսօր, առավել քան երբևէ, կարևորվում է կրթության դերը:

Այսօր ես լավ եմ սովորում , քանզի գիտակցում եմ, որ գրագետ ու բազմակողմանի զարգացած լինելը և մասնագիտություն ունենալը կյանքում ամուր ոտքերի վրա կանգնելու գրավականն են. դրա իրականացման առաջին քայլն ընձեռում է դպրոցը:

Ավետիսյան Գայանե

Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ

1868 թվականին Մուշ գավառի Բուլանլուղ Գյուղից Այվազը իր որդի Պետրոսի հետ տեղափոխվում է Բայազետ: Պետրոսը ուներ 2 որդի՝ Գեղամը և Ենոքը: Գեղամը ունեցել է 1 աղջիկ և 6 տղա՝ Մեծ Սարգիս, Աբրահամ, Սահակ, Հայրապետ, Նահապետ, Սարգիս: Մեծ Սարգիսը ժառանգ չի ունեցել, փոքր Սարգիսը ունեցել է 1 որդի՝ Զավենը, Հայրապետը և Սահակը ժառանգներ չեն ունեցել, Նահապետը ունեցել է 2 որդի՝ Վալոդը և Սահակը: Վալոդը ունեցել է 2 որդի՝ Վաչագանը և Համլետը: Վաչագանը ունեցել է 2 որդի՝ Նահապետը և Գեղամը: Նահապետը ունեցել է 1 որդի՝ Վաչագանը, Գեղամը՝ 1 դուստր: Համլետը ունեցել է 2 որդի՝ Ավետիքը և Վոլոդյան: Սահակը ունեցել է 1 որդի՝ Արմենը: Աբրահամը ունեցել է 2 որդի՝ Սեդրակը և Միսակը: Միսակը զոհվել է Հայրենական մեծ պատերազմում, Սեդրակը ունեցել է 4 որդի՝ Պապինը, Վարդանը, Էդվարդը և Միսակը: Պապինն ունեցել է 1 որդի՝ Դավիթը, Վարդանը՝ 2 որդի՝ Իշխանը և Սեդրակը, Իշխանը ունեցել է 1 որդի՝ Վարդանը, Սեդրակը՝ 2 դուստր: Էդվարդը ունեցել է 1 որդի՝ Աբրահամը, Միսակը՝ 1 որդի՝ Լյովան: Ենոքը ունեցել է 6 որդի՝ Հակոբ, Նիկոլե, Մկրտիչ, Ալեքսան, Պետրոս, Գևորգ: Հակոբը և Մկրտիչը ժառանգներ չեն ունեցել: Պետրոսը ունեցել է 2 տղա՝ Վանուշ և Հայկարամ: Հայկարամը ժառանգ չի ունեցել: Վանուշը՝ 1 տղա՝ Պապին: Պապինը՝ 2 տղա՝ Վանուշ և Գևորգ, Վանուշը 1 տղա՝ Սամվել, Գևորգը՝ 1 տղա՝ Արման: Նիկոլեն ունեցել է 3 տղա՝ Արտավազդ, որը ժառանգ չի ունեցել, Արտուշը՝ 1 որդի Արտավազդ՝ 1 որդի՝ Արտուշ, Վաղոն՝ 3 որդի՝ Նիկոլ /Կոլյա, Արտուշ,/ Ենոք, Անդրանիկ /Վաղարշակ/: Ալեքսանն ունեցել է 3 որդի՝ Սիսակ, Հակոբ, Հայկո: Սիսակը՝ 1 որդի Միսակ: Միսակը՝ 1 որդի՝ Սիսակ: Հակոբը՝ 2 որդի՝ Գառնիկ, Աշոտ /3 աղջիկ/: Գառնիկը՝ 2 որդի՝ Հարութ, Հակոբ: Հարութը՝ 1 տղա՝ Գառնիկ: Հակոբը՝ 2 տղա՝ Աշոտ, Արտյոմ: Հայկոն ունեցել է 3 տղա՝ Վասիլ, Հայկ, Ալեքսան / Պապին/: Վասիլը՝ 1 տղա՝ Վանուշը՝ 1 տղա՝ Սամվել: Հայկը՝ 2 տղա՝ Արամ, Արտուշ: Արտուշը՝ 1 տղա՝ Հայկո: Ալեքսանը / Պապին/՝ 1 տղա՝ Վանուշը՝ 2 տղա՝ Ալեքսան, Հայկո: Գևորգը ունեցել է 6 տղա՝ Գվիդոն, Գառնիկ, Խորեն, Մայիս, Արշավիր, Համբարձում: Գվիդոնը և Գառնիկը ժառանգներ չեն ունեցել: Մայիսը ունեցել է՝ 2 տղա՝ Գևորգ և Գագիկ: Գագիկը՝ 1 տղա՝ Էդգար, Գևորգը՝ 1 տղա՝ Մայիս: Մայիսը ունի 4 տղա՝ Դանիել, Ստեփան, Գևորգ , Արման:



Արթուր Գրիգորյան

Համբարձումը՝ 1 տղա՝ Աշոտ: Աշոտը՝ 2 տղա՝ Մկուչ և Արմեն: Խորենն ունեցել է 1 տղա՝ Վանուշ: Վանուշը՝ 2 տղա՝ Խորեն և Արթուր: Խորենը՝ 1 տղա՝ Դավիթ, Արթուրը՝ 2 տղա՝ Սամվել, Դանիել: Արշավիրն ունեցել է 1 տղա՝ Սամվելը՝ 2 տղա՝ Գևորգ և Արշավիր:

Այվազները կրում են Այվազյան, Գեղամյան, Ենոքյան ազգանունները:

Նյութը՝ Վարդան Այվազյանի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Հայոց բանակի 28-ամյակին՝«Սպասում ենք բոլորիդ» խորագրով: Միջոցառմանը հրավիրված էին այժմ բանակում ծառայող զինվորների մայրերը, հյուրեր համայնքապետարանից, ներկա էին ուսուցիչներ և աշակերտներ: Միջոցառումը հայրենասիրական թեմայով էր՝ համեմված երգով, պարով, տեսանյութերով: Միջոցառումը ամփոփվեց ներկաների կողմից հնչած ջերմ ու հուզիչ խոսքերով:

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի տարրական դասարաններում /1-4 / կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված Հովհաննես Թումանյանին: Կազմակերպվել էր «շրջայց պատկերասրահում», որտեղ ցուցադրվեցին երեխաների ձեռքի աշխատանքներն ու նկարները: Աշակերտները փոքր էպիզոդներ ներկայացրին Թումանյանի հեքիաթներից՝ մարմնավորելով հեքիաթների հերոսների կերպարները: Վերջում իրականացվեց «Նվիրի՜ր գիրք» ակցիան:

ԱՐՎԵՍՏԸ ԼԱՅՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ Է

Լուսինե Առաքելյան

Արվեստը միայն նկարչությունը, պարարվեստը, ճարտարապետությունը, գրականությունը, երաժշտությունը չէ...

Արվեստը որքան որ առաջին հայացքից պարզ բառ է, մյուս կողմից էլ ներդաշնակ ու լայն հասկացություն է:

Արվեստն ամեն ինչում գեղեցիկը տեսնելու ունակությունն է: Ամեն առավոտ վազում եմ դպրոց՝ առանց սենյակս կարգի բերելու: Անկողինս թափթփված է, սենյակիս վիճակը՝ քաոսային: Իսկ երբ հոգնած տուն եմ մտնում, դեմքս արևի պես շողում է, երբ տեսնում եմ սենյակս կարգի բերած, ամեն վրձին, ամեն գիրք, ամեն մի հագուստ իր տեղը դրված, հասկանում եմ, որ դա էլ է արվեստ՝ մեր առօրյայի մի մասը կազմող: Ամեն երեկո՝ օրս ամփոփելիս, մտքերս հանձնում եմ թղթին ու հիշում օրվա գեղեցիկ ակնթարթները, նորից ու նորից վերապրում դրանք, գուցե հուզվում եմ, գուցե և հաճույք ստանում... Մի՞թե դա արվեստ չէ: Ամեն անգամ երթուղայինում, անծանոթ դեմքեր տեսնելիս, մտովի նրանց դիմագծերը կտավին եմ հանձնում: Մարդկանց աչքերում արև եմ տեսնում, արև նկարում մտովի, նայում, զգում, հայացքներ եմ որսում, իսկ երբ տուն եմ գնում, վրձիններս ու թղթերս ինձ են սպասում, գուցե և նրանց չեմ պատկերում այնպես, ինչպես տեսել էի, բայց արվեստ եմ ստեղծում...

Արվեստ է և մարդը, կարելի է ասել մարդն արվեստի ամենամեծ գլուխգործոցն է՝ շինված հողից, բայց որքա՛ն-որքա՛ն զգացմունք կա այդ ստեղծագործության մեջ...

Իսահակյանն ասել է՝ «Արվեստը պիտի արտահայտե արվեստագետի հոգին, իրերի, մարդու հոգին: Նա պիտի մեկնաբանե պատկերներով մեր ներաշխարհը: Նա պիտի թարգմանե բնությունը»:

Ա՜յո, մեր ներաշխարհում եղածը արվեստ է, պատրանք, զգացմունք, գուցե և բնություն...

Իսկ ամենահիրական արվեստը մարդկանց սիրելն է, դա սիրելու արվեստն է: Բնության մեջ աշխարհի սահմաններից դուրս կա սիրելու, ստեղծելու, զգալու, վերապրելու, հաճույք ստանալու, քո ստեղծածով հիանալու, կարոտ զգալու, հեռանալու արվեստ: Ինչ-որ մեկով ապրելու ու այդ մեկով կամ մի քանիսով գեղեցիկ հիշողություններ ստեղծելու արվեստ:

Իսկ նա, ով սիրել գիտի կյանքը, սիրում է նաև արվեստը: Վերջինս մի ամբողջ կյանք է...

ՄՆՈՒՆԴԸ ԾԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է

Ես Վաչագանն եմ, սովորում եմ չորրորդ դասարանում, օգտվում եմ դպրոցական սննդից /ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր/: Ինձ համար շատ կարևոր է դպրոցական սնունդը, քանի որ այն ինձ օգնում է շարժվել, մեծանալ, շնչել, պայքարել հիվանդությունների հարուցիչների դեմ: Իմ կարծիքով՝ մենք որքան ճիշտ սնվենք, այնքան ավելի ընդունակ կլինենք և ավելի հեշտ կսովորենք մեր դասերը: Ես ունեմ ընկերներ, ովքեր ուշ արթնանալու կամ շտապելու պատճառով չեն հասցնում նորմալ սնվել, և դպրոցական սնունդը լավագույն առիթ է, որպեսզի մենք միասին ճաշենք և տիրապետենք էթիկայի կանոններին: Դպրոցական սննդի միջոցով մենք փոքր հասակից սկսում ենք ճիշտ սնվել, նաև սովորում ենք մի կտոր հացը կիսել հասակակիցների հետ՝ անկախ սեռից և սոցիալական կարգավիճակից:

Վաչագան Այվազյան

Իմ սիրելի դպրոցական ընկերներ, մի՜ խուսափեք դպրոցական սննդից և մի՜ հրաժարվեք ճիշտ սնվելուց: Առողջ, գեղեցիկ, լավ տեսք ունենալու և լավ զգալու համար դու պետք է ընդունես ճիշտ քանակի բազմազան և որակյալ սնունդ:

ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Օրերս Գեղարքունիքի միջնակարգ դպրոց էին այցելել Գավառի Մ. Բունիաթյանի անվան թիվ 8 դպրոցի տնօրեն Վ. Սարգսյանը և աշակերտական խորհրդի անդամները: Նրանք նպատակ ունեին՝ ծանոթանալու «1+1» դպրոցական թերթի աշխատանքներին, «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի գործունեությանը: Ծավալվեց հետաքրքիր զրույց լրագրողական խմբի աշակերտների հետ, հյուրերը հետաքրքրվեցին նրանց կատարած գործունեությամբ, խմբագրության կողմից ստացան թերթի օրինակներ և կիսվեցին իրենց տպավորություններով:

ՄԵՆՔ ԱՐԴԵՆ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ ԵՆՔ

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում հանդիսավոր կերպով նշվեց դպրոցում գործող «1+1» դպրոցական թերթիգործունեության մեկ տարին:

«1+1» դպրոցական թերթի լրագրողական խումբը, որիանդամները աշակերտներն են, ներկայացրին մեկ տարվա իրենց կատարած

աշխատանքը և հպարտացան իրենց ձեռքբերումներով: Իրենց գոհունակությունը և հիացմունքը «1+1» դպրոցական թերթի աշխատանքից արտահայտեցին հրավիրված հյուրերից համայնքի ղեկավար Արայիկ Աբրահամյանը, դպրոցի տնօրեն Գոհար Բաղալյանը, փոխտնօրեն Նելլի Հակոբյանը, ուսուցիչ Ռաֆիկ Միքայելյանը: Ջեմմա Խաչատրյանը նշեց, որ աշակերտներն արդեն տիրապետում են լրագրողական արվեստին, նրանց ասելիքը սեղմ է և սահուն: Լուսինե Գրիգորյանը իր խոսքում նշեց, որ աշակերտների մոտ կա ձգտում գրքի, գիտական տարբեր ոլորտների ուսումնասիրության մեջ. աշխատում են ջանասիրաբար ու հետաքրքրությամբ: Թերթի պատասխանատու և խմբագիր Ռոզա Հակոբյանը համառոտ ներկայացրեց թերթի հրատարակման պատմությունը և շնորհակալություն հայտնեց բոլորին:

Վերջում թերթի խմբագրությունը գրքեր նվիրեց ներկաներին:



Հայտարարություն

Հարգելի՜ երեխաներ, ծնողներ, տատիկներ և պապիկներ, մեր պետական բյուջեն կազմավորվում է փոքր և միջին ձեռնարկատերերի հարկերից: Այդիսկ պատճառով էլ հորդորում ենք բոլորին՝ ցանկացած առևտրական գործարք կատարելիս պահանջե՜ք ձեր հասանելիք կտրոնները, որպեսզի մեր պետական բյուջեն միշտ համալրված լինի, և այդ միջոցները կառավարությունը կարողանա ուղղորդել բանակին՝ թե՜ զինվորի կարիքները և թե՜ զենք -զինամթերք ապահովելու համար:

«1+1» դպրոցական թերթի խմբագրությունը անցկացնում է մրցույթ կարճամետրաժ հետաքրքիր տեսաֆիլմերից /1 րոպե տևողությամբ/՝ «դու ինքդ ռեժիսոր ես» խորագրով: Տեսագրված ֆիլմերը կարող եք ուղարկել zgorserver@gmail.com հասցեին

Հարգելի՝ համագյուղացիներ, Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթին տրված ձեր հարցազրույցները մեր դպրոցականների համար ինքնահաստատման դաս են, որով մեր երեխաները ձեր կողմից տրված նյութերը շարադրում են իրենց հայացքների և ընկալումների շրջանակում, ավելի համառոտ ձևով: Մենք ներողություն ենք խնդրում, եթե չենք մանրամասնում այն, ինչի մասին մանրամասն խոսել եք դուք:

Հարգանքով՝ Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթի խմբագրություն:

4

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1
Փոստային դասիչ՝ 1207
Թողարկման օրը՝ 27. 02. 2020 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝ Ռոզա Հակոբյան
Տպաքանակը՝ 500
Հեռախոս՝ 093919658:
էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru
Կայք էջ՝ 1ետ1.հայ